ՌԽՖՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՅԱԶ ՄՈՒԹԱԼԻԲՈՎԻՆ

Ռուսաստանի ժողովրդական երեք պատգամավորներ Մութալիբովից մերժում ստանալով ԼՂԻՄ եւ Ադրբեջանի՝ նրան յարակից շրջանները մեկնելու առաջարկի գծով, կրկին պատրաստակամություն են յայտնում ամեն ինչ անել հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման համար։ Հետաքրքիր է, այդ յամառությունը միայն մարդու իրավունքների պաշտպանության անշահախնդիր աշխատանքի հառաջո՞ւմն է, թէ՞ ինչ-որ շրջայայտուած քաղաքականության թելադրանք։

Օգոստոսի 1ին ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորներ Լ.Պոնոմարեովը, Ա.Շաբադը եւ Վ.Շեյնիսը հետեւեալ դիմումն են ուղղել Ադրբեջանի հանրապետության նախագահ Ա.Մութալիբովին.

«ՌԽՖՍՀ նախագահ Բ.Ելցինի, փոխնախագահ Ա.Ռուցկոյի եւ ՌԽՖՍՀ Գերագոյն Խորհրդի մարդու իրաւունքների յանձնաժողովի յանձնարարութեամբ, մենք՝ Ռուսաստանի մի խումբ ժողովրդական պատգամաւորներ, եղանք Ադրբեջանի Հանրապետութիւնում՝ ազգամիջեան հակամարտության խաղաղ կարգաւորման ու մարդու իրաւունքների ապահովման հնարաւորութիւններն ուսումնասիրելու նպատակով։ Ուղեւորության ընթացքում մենք օգտուում էինք ԽՍՀՄ Պաշտպանության նախարար, Խորհրդային Միության մարշալ Դ.Եազովի աջակցութիւնից։ Մեզ հետ Բաքու ժամանեցին Ցամաքային զօրքերի գլխաւոր շտաբի պետ, զօրավար, գնդապետ Մ.Կոլեսնիկովը եւ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զօրքերի վարչության պետ զօրավար Եու.Բալախոնովը, որոնք Յուլիսի 31ին եւ Օգոստոսի 1ին մասնակցեցին Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ա.Մութալիբովի եւ ԼՂԻՄի հանրապետական կազմկոմիտէի նախագահ Վ.Պոլեանիչկոյի հետ մեր ունեցած հանդիպումներին։

Դժբախտաբար, իբրեւ միջնորդ հանդէս գալու մեր առաջարկը չընդունուեց։ Մերժուեց նաեւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ եւ Ադրբեջանի՝ նրան յարակից շրջաններ մեկնելու մասին մեր առաջարկը, որը նպատակ ունէր տեղում ծանօթանալ իրավիճակին, զրուցել հայ եւ ադրբեջանցի ազգաբնակչության, խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զօրքերի զինծառայողների հետ։

Մեզ յուսադրում է Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության հաղորդագրութիւնը ԼՂԻՄի հայ ազգաբնակչության լիազօր ներկայացուցիչների հետ բանակցութիւններ սկսելու մասին։ Միաժամանակ, մենք գիտակցում ենք, որ բանակցութիւնների արդիւնքը դրական ընթացք կունենայ միայն այն դէպքում, եթէ բանակցութիւններին մասնակցեն իրավիճակի վրայ վճռական ազդեցութիւն ունեցող եւ հակամարտության խաղաղ կարգաւորմամբ շահագրգիռ բոլոր ուժերը։

Մենք օգտակար ենք համարում Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության հետ կայացած մտքերի անկեղծ փոխանակումը եւ գտնում ենք, որ այն հետագայ երկխօսության հընարաւորութիւններ է ստեղծում։

Առաւել կարեւոր ենք նկատում Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ա.Մութալիբովի այն յայտարարութիւնը, որ ԼՂԻՄում եւ Ադրբեջանի՝ նրան յարակից շրջանների հայաբնակ գիւղերում ու աւաններում կը կասեցուի անձնագրային կարգի ստուգումը։ Այդ ստուգումները, մեր կարծիքով, ստեղծուած իրավիճակում յանգեցնում են մարդկային զոհերի, խաղաղ բնակչության բռնի տեղահանման, կոպտօրէն ոտնահարում են մարդկային իրաւունքները, խոչընդոտում են ազգամիջեան հակամարտության խաղաղ կարգաւորմանը։ Այնուամենայնիւ, անհանգստացնում է այն հանգամանքը, որ անձնագրային կարգի ստուգումները կարող են վերսկսել, քանզի մեզ այդպէս էլ չյայտնեցին, թէ որքան ժամանակով են դադարեցուած ստուգումները։

Բռնագաղթի դադարեցումը այնժամ միայն կարող է հակամարտության խաղաղ կարգաւորման նախապայման դառնալ, երբ պայմաններ ստեղծուեն Ապրիլ ամսուայ վերջից սկսուած զինաթափման գործողութիւնների ընթացքում տեղահանուած բնակչության վերադարձի համար։ Հետագայ բանակցութիւնների ընթացքում տեղին կը լինի լուծել երկու հանրապետութիւններից փախստականների վերադարձի հարցը՝ իրենց նախկին բնակավայրերը։

Մենք երախտագիտութեամբ ենք ընդունում Վ.Պոլեանիչկոյի հրաւէրը՝ Սեպտեմբերի սկզբին այցելել ԼՂԻՄ եւ յարակից շրջանները։

Մենք մեր կողմից յայտարարում ենք, որ պատրաստ ենք մեր հնարաւորութիւնների սահմաններում ամեն ինչ անել հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգաւորման համար։ Մենք համոզուած ենք, որ կը ստանանք մեր ընտրողների աջակցութիւնը, որոնց առանձնապէս մտահոգում է հակամարտության զօտում խորհրդային բանակի եւ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զօրքերի զինուորների ու սպաների զոհուելը, Ադրբեջանից փախստականների մեծ հոսքը։ Համոզուած ենք նաեւ, որ կը գտնենք մեր գործընկերների՝ Ռուսաստանի խորհրդարանի պատգամաւորների ու ղեկավարության աջակցութիւնը»։